«01» հոկտեմբեր 2020թ. **N 82**

ԻՐԱԶԵԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ

ՀՀ տարածքից ԵՏՄ անդամ պետություններ արտահանվող ապրանքների մատակարարման գործարքների նկատմամբ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափի կիրառության վերաբերյալ

Հարց

ՀՀ տարածքից ԵՏՄ անդամ պետություններ արտահանված ապրանքների մատակարարման գործարքների նկատմամբ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափի կիրառությունը հիմնավորելու համար արտահանողի կողմից հարկային մարմին ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնել, ի՞նչ ժամանակահատվածում, և արդյո՞ք դիմացի կողմի ԱԱՀ-ի վճարման մասին տեղեկանք չունենալը կարող է հանգեցնել ԱԱՀ-ի գծով պարտավորությունների առաջացման:

Պատասխան

«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 72-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ապրանքների փոխադարձ առևտրում անուղղակի հարկերի գանձումն իրականացվում է նշանակման երկրի սկզբունքով, որով նախատեսվում է ապրանքների արտահանման ժամանակ ավելացված արժեքի հարկի զրոյական դրույ-

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

քաչափի կիրառում և (կամ) ակցիզների վճարումից ազատում, ինչպես նաև ներմուծման ժամանակ դրանց հարկումն անուղղակի հարկերով:

«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի անբաժանելի մաս համարվող՝ «Ապրանքների արտահանման ու ներմուծման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման և դրանց վճարման նկատմամբ վերահսկողության կարգի մասին» N18 հավելվածով սահմանված արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ մի անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք ապրանքներ արտահանելու դեպքում այն անդամ պետության հարկատուի կողմից, որի տարածքից դուրս են բերվել ապրանքները, կիրառվում են ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափ և (կամ) ակցիզների վճարից ազատում՝ նույն արձանագրության 4-րդ կետով նախատեսված փաստաթղթերը հարկային մարմին ներկայացնելու դեպքում: Միաժամանակ, արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափ կիրառելու և (կամ) ակցիզների վճարից ազատվելու հիմնավորումը հաստատելու համար, այն անդամ պետության հարկ վճարողի կողմից, որի տարածքից արտահանվում են ապրանքները, հարկային հայտարարագրի հետ միաժամանակ հարկային մարմին է ներկայացվում նաև ապրանքների ներսբերման և անուղղակի հարկերի վճարման մասին հայտարարությունը, որը կազմված է առանձին միջազգային միջգերատեսչական պայմանագրով նախատեսված ձևով, այն անդամ պետության հարկային մարմնի կողմից, որի տարածք են ներմուծվել ապրանքները, անուղղակի հարկերի վճարման մասին նշումով: Ընդ որում՝ նույն արձանագրության 4-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացվում են հարկային մարմին՝ ապրանքները բեռնաառաքելու (փոխանցելու) ամսաթվից 180 օրացուցային օրվա ընթացքում:

ՀՀ հարկային օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով հարկվում է Հայաստանի Հանրապետության տարածքից ԵՏՄ անդամ պետություն արտահանված՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի (բացառությամբ սև և գունավոր մետաղների ջարդոնի) մատակարարումը՝ օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթուղթը հարկային մարմին ներկայացնելու դեպքում:

Օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքից ԵՏՄ անդամ պետություններ արտահանված՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների մատակարարման գործարքների նկատմամբ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափի կիրառությունը հիմնավորվում է արտահանման հարկային հայտարարագիրը արտահանողի կողմից հարկային մարմին ներկայացնելու օրը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ ՀՀ տարածքից ԵՏՄ անդամ պետություններ արտահանված ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների մատակարարման գործարքների նկատմամբ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափի կիրառությունը հիմնավորվելու համար արտահանողի կողմից հարկային մարմին է ներկայացվում արտահանման հարկային հայտարարագիր: Ընդ որում, վերոնշյալ արձանագրության 4-րդ կետին համապատասխան արտահանման հարկային հայտարարագիրը ներկայացվում է հարկային մարմին՝ ապրանքները բեռնառաքելու (փոխանցելու) ամսաթվից (արտահանման օրվանից) 180 օրացուցային օրվա ընթացքում: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ արտահանողի կողմից ապրանքների ներսբերման և անուղղակի հարկերի վճարման մասին հայտարարությունը հարկային մարմին չներկայացնելու դեպքում ԱԱՀ-ի գծով պարտավորություն չի առաջանում:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am